ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ

---

13 սեպտեմբեր 2024թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07/01
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Նարեկ Ալիխանյանը, Արման Բազինյանը, Արտակ Բոջիկյանը, Վարդան Թամրազյանը, Նարեկ Հարությունյանը, Սուրեն Մելիքյանը, Շուշանիկ Սահակյանը, Հասմիկ Վարդանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Նոնա Գրիգորյան, Ադամ Սարգսյան, Աշխեն Ամիրխանյան, Մխիթար Հովհաննիսյան, Գեվորգ Ամիրխանյան, Մարինե Սահակյան, Գարունիկ Վարդանյան, Վարդան Գրիգորյան, Սարգիս Խաչատրյան, Արսեն Սարգսյան

Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դավիթ Սարգսյանը

Նիստը արձանագրում էր ՝ Սոնա Եգանյանը

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջան համայնքի ավագանու անդամ Վարդան Ռոմիկի Թամրազյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան խոշորացված համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում 11-036-0009-0021 ծածկագրով 0.01հա հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
3. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց թիվ 73/10 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 21.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
4. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց թիվ 75/1 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 32.5քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
5. Գույքի օտարման մասին:
Զեկ. ԴավիթՍարգսյան
6. Գույքի օտարման մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
7. Գույքի օտարման մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
8. Գույքի օտարման մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
9. Գույքի օտարման մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
10. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան խոշորացված համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում 11-003-0227-0073 ծածկագրով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
11. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գայի փողոց թիվ 84/5 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 48.69քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
12. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Բարեկամության փողոց թիվ 1/9 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 40.0քմ հողամասն վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
13. Դիլիջան համայնքի 2024թ.բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
14. Դիլիջանի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 17-ի թիվ 292-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
15. Փոխադրամիջոցի գույքահարկի և անշարժ գույքի հարկի արտոնություն սահմանելու մասին:

Զեկ. Դավիթ Սարգսյան
16. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց թիվ 1/10 հասցեի 43.1քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
17. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 2327.0քմ մակերեսով թվով 3 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու, ինչպես նաև հողամասերի կառուցապատման իրավունքի պայմանները և տարեկան վճարի մեկնարկային գները հաստատելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
18. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոց 1-ին նրբ. թիվ 6/3 հասցեի 86.5քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
19. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 2284.2քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը, գյուղատնտեսական նշանակության հողերից 7363.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու, ինչպես նաև հողամասերի վարձակալության իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գները հաստատելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
20. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 10450.8քմ ընդհանուր մակերեսով թվով 13 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
21. Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող մի շարք ծածկագրով հողամասեր Դիլիջանի համայնքի հողերի ֆոնդում ընդգրկելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
22. Գետի հունի մաքրման աշխատանքներ կատարելու մասին:
Զեկ. Դ. Սարգսյան
23.ԳՄՀԸ կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու վերաբերյալ Դիլիջան համայնքի հայտը հաստատելու մասին:
Զեկ. Դ. Սարգսյան
24. Դիլիջան համայնքի ավագանու 7-րդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան

Համայնքի ղեկավարն առաջարկեց օրակարգում ընդգրկել ևս 2 հարց՝

1.Գետի հունի մաքրման աշխատանքներ կատարելու մասին:
Զեկ. Դ. Սարգսյան

2.ԳՄՀԸ կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու վերաբերյալ Դիլիջան համայնքի հայտը հաստատելու մասին:
Զեկ. Դ. Սարգսյան

Համայնքի ավագանին (կողմ-11 դեմ-0 ձեռնպահ-0) ընդունեց առաջարկությունը և հաստատեց օրակարգը նոր խմբագրությամբ:

Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին օրենքի» 70-րդ հոդվածի պահանջներին համապատասխան հրապարակեց համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Վարդան Ռոմիկի Թամրազյանի՝ ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին դիմումը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 750-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ 11-036-0009-0021 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.01ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդված 5-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024թ. հուլիսի 19-ի թիվ 2/փ-299 դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան խոշորացված համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում 11-036-0009-0021 ծածկագրով 0.01հա հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հիմք ընդունելով <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդվածի 5-րդ մասը, սույն որոշման 1-ին կետով սահմանված, Դիլիջան համայնքի, Խաչարձան գյուղի 11-036-0009-0021 ծածկագրով, 0.01հա հողամասը, ըստ նպատակային նշանակության դիտարկել որպես էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հող, ըստ գործառնական նշանակության՝ կապի:
3. <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդվածի 14-րդ և 30-րդ մասերով սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան

ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով արտացոլել սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները Դիլիջան համայնքի ավագանու 03.10.2022թ. թիվ 198-Ա և ՀՀ Տավուշի մարզպետի 26.10.2022թ. թիվ 299-Ա որոշումներով հաստատված Դիլիջան խոշորացված համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 751-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐՋՈՆԻԿԻՁԵԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 73/10 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 21. ՕՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. հուլիսի 17-ի թիվ 820-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց թիվ 73/10 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Մերինե Թաթուլի Փաշինյանի կողմից ինքնակամ կառուցված 21. Օքմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 26072024-11-0086/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Մերինե Փաշինյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց թիվ 73/10 հասցեի ավտոտնակը՝ 21. Օքմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 21. Օքմ հողամասը, համապատասխանաբար, 48636 դրամ և 143521 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 21. Օքմ հողամասը քաղ. Մերինե Թաթուլի Փաշինյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց թիվ 73/10 հասցեի ավտոտնակը՝ 21. Օքմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 21. Օքմ հողամասը, համապատասխանաբար, 48636 դրամ և 143521 դրամ արժեքներով քաղ. Մերինե Թաթուլի Փաշինյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 752-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐՋՈՆԻԿԻՁԵԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 75/1 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 32. 5ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. հուլիսի 17-ի թիվ 821-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց թիվ 75/1 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Արսեն Միերի Ավալյանի կողմից ինքնակամ կառուցված 19. 6քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 26072024-11-0061/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Արսեն Ավալյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց թիվ 75/1 հասցեի ավտոտնակը՝ 19. 6քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 32. 5քմ հողամասը, համապատասխանաբար, 45394 դրամ և 222115 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 32. 5քմ հողամասը քաղ. Արսեն Միերի Ավալյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց թիվ 75/1 հասցեի ավտոտնակը՝ 19. 6քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 32. 5քմ հողամասը, համապատասխանաբար, 45394 դրամ և 222115 դրամ արժեքներով քաղ. Արսեն Միերի Ավալյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 753-Ա/

Լսեցին
ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈԲԵՐՏ ՉԱՊՈՒԽՅԱՆ/

Դիլիջան համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել՝ Դիլիջան քաղաքի Հովսեփյան փողոցի թիվ 83 շենքի թիվ 35, երեք սենյականոց բնակարանն ուղղակի վաճառքի միջոցով վարձակալ Արևհատ Արշալույսի Ամիրյանի ընտանիքին օտարելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող, Դիլիջան քաղաքի Հովսեփյան փողոցի թիվ 83 շենքի թիվ 35, երեք սենյականոց՝ 91,1 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալ Արևհատ Արշալույսի Ամիրյանի ընտանիքին ուղղակի վաճառքի միջոցով, 136650 դրամ արժեքով (մեկ քառակուսի մետրի համար սահմանված է 1500 դրամ) օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 754-Ա/

Լսեցին
ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջան համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել՝ Դիլիջան քաղաքի Հովսեփյան փողոցի թիվ 83 շենքի թիվ 23, երկու սենյականոց բնակարանն ուղղակի վաճառքի միջոցով վարձակալ Մարիցա Ռաֆաելի Սիմոնյանի ընտանիքին օտարելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող, Դիլիջան քաղաքի Հովսեփյան փողոցի թիվ 83 շենքի թիվ 23, երկու սենյականոց՝ 72,5 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալ Մարիցա Ռաֆաելի Սիմոնյանի ընտանիքին ուղղակի վաճառքի միջոցով, 108750 դրամ արժեքով (մեկ քառակուսի մետրի համար սահմանված է 1500 դրամ) օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 755-Ա/

Լսեցին
ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. Դ. ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջան համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել՝ Դիլիջան քաղաքի Հովսեփյան փողոցի թիվ 83 շենքի թիվ 19, երկու սենյականոց բնակարանն ուղղակի վաճառքի միջոցով վարձակալ Անահիտ Վազգենի Թամրազյանի ընտանիքին

օտարելու մասին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող, Դիլիջան քաղաքի Հովսեփյան փողոցի թիվ 83 շենքի թիվ 19, երկու սենյականոց՝ 72,5 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալ Անահիտ Վազգենի Թամրազյանի ընտանիքին ուղղակի վաճառքի միջոցով, 108750 դրամ արժեքով (մեկ քառակուսի մետրի համար սահմանված է 1500 դրամ) օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 756-Ա/

Լսեցին
ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. Դ. ՍԱՐԳՍՅԱՆ /

Դիլիջան համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել՝ Դիլիջան քաղաքի Հովսեփյան փողոցի թիվ 81 շենքի թիվ 17, երկու սենյականոց բնակարանն ուղղակի վաճառքի միջոցով վարձակալ Մարինե Կոլյայի Ղուկասյանի ընտանիքին օտարելու մասին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող, Դիլիջան քաղաքի Հովսեփյան փողոցի թիվ 81 շենքի թիվ 17, երկու սենյականոց՝ 72,2 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալ Մարինե Կոլյայի Ղուկասյանի ընտանիքին ուղղակի վաճառքի միջոցով, 108300 դրամ արժեքով (մեկ քառակուսի մետրի համար սահմանված է 1500 դրամ) օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 757-Ա/

Լսեցին
ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. Դ. ՍԱՐԳՍՅԱՆ /

Դիլիջան համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել՝ Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոցի թիվ 5 շենքի թիվ 29, երեք սենյականոց բնակարանն ուղղակի վաճառքի միջոցով վարձակալ Հովհաննես Հարությունի Սաղրյանի ընտանիքին օտարելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող, Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոցի թիվ 5 շենքի թիվ 29, երեք սենյականոց՝ 89,82ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալ Հովհաննես Հարությունի Սաղրյանի ընտանիքին ուղղակի վաճառքի միջոցով, 134730 դրամ արժեքով (մեկ քառակուսի մետրի համար սահմանված է 1500 դրամ) օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 758-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ 11-003-0227-0073 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդված 5-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024թ. հունիսի 28-ի թիվ 2/փ-273 դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան խոշորացված համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում 11-003-0227-0073 ծածկագրով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հիմք ընդունելով <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդվածի 5-րդ մասը, սույն որոշման 1-ին կետով սահմանված, Դիլիջան համայնքի, Դիլիջան քաղաքի 11-003-0227-0073 ծածկագրով, 367.9քմ հողամասը, ըստ նպատակային նշանակության դիտարկել որպես Բնակավայրերի հող, ըստ գործառնական նշանակության՝ հասարակական կառուցապատման:
3. <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդվածի 14-րդ և 30-րդ մասերով սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով արտացոլել սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները Դիլիջան համայնքի ավագանու

03.10.2022թ. թիվ 198-Ա և ՀՀ Տավուշի մարզպետի 26.10.2022թ. թիվ 299-Ա որոշումներով հաստատված Դիլիջան խոշորացված համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 759-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԱՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 84/5 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 48. 69ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. հուլիսի 22-ի թիվ 833-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գայի փողոց թիվ 84/5 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Վահե Նորիկի Սարգսյանի կողմից ինքնակամ կառուցված 77. 14քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 31072024-11-0046/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Վահե Սարգսյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գայի փողոց թիվ 84/5 հասցեի ավտոտնակը՝ 77. 14քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 48. 69քմ հողամասը, համապատասխանաբար, 178657 դրամ և 332763 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 48. 69քմ հողամասը քաղ. Վահե Նորիկի Սարգսյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գայի փողոց, թիվ 84/5 հասցեի ավտոտնակը՝ 77. 14քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 48. 69քմ հողամասը, համապատասխանաբար, 178657 դրամ և 332763 դրամ արժեքներով քաղ. Վահե Նորիկի Սարգսյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 760-Ա/

Լսեցին

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/9 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 40. 0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. օգոստոսի 02-ի թիվ 870-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Բարեկամության փողոց թիվ 1/9 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Դավիթ Լևոնի Առուստամյանի կողմից ինքնակամ կառուցված 25. 65քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 13082024-11-0062/:
Քանի որ տվյալ ավտոտնակը կառուցվել է բազմաբնակարան շենքերի բակային տարածքում, ուստի գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Դավիթ Առուստամյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Բարեկամության փողոց թիվ 1/9 հասցեի ավտոտնակը՝ 25. 65քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 40. 0քմ հողամասը, վարձակալության իրավունքով 39700 դրամ տարեկան վարձավճարով, մինչև 2060թ. դեկտեմբերի 31-ը ժամկետով, որի վերաբերյալ վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 40. 0քմ հողամասը քաղ. Դավիթ Լևոնի Առուստամյանին վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Բարեկամության փողոց թիվ 1/9 հասցեի ավտոտնակը՝ 25. 65քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 40. 0քմ հողամասը, 39700 դրամ տարեկան վարձավճարով մինչև 2060թ. դեկտեմբերի 31-ը ժամկետով քաղ. Դավիթ Լևոնի Առուստամյանին վարձակալության իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 761-Ա/

Լսեցին

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ.ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

«Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում նախակրթարան բացելու նպատակով անհրաժեշտ է 1389.0 հազար ՀՀ դրամ գումար՝ որպես համայնքի ներդրում, որը հաստատված է «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի 2024 թվականի ապրիլի 15-ի թիվ 10/24 PSP պայմանագրով: Բացի այդ 2024 թվականի հոկտեմբերի 5-ին նախատեսվում է կազմակերպել Դիլիջանի 480 ամյակին նվիրված միջոցառում, որի կազմակերպման համար նույնպես անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի 6-րդ մասի և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով ՝ Դիլիջան համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1.Դիլիջան համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից՝ 11-01-02 «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891» (պահուստային միջոցներ) տնտեսագիտական հոդվածից հատկացնել 18 360 600 (տասնութ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար վեց հարյուր) ՀՀ դրամ և ուղղել՝

1.1 «08-02-04» Դիլիջան համայնք (Այլ մշակույթային կազմակերպություններ) բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածին՝ 16971,6 հազար ՀՀ դրամ,

1.2 «09-06-01» Դիլիջան համայնք /Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ /բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 4639 /այլ ընթացիկ դրամաշնորհներ/ տնտեսագիտական հոդվածին՝ 1389,0 հազար ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 762-Ն/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 292-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ և 42-րդ կետերի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 33-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով «Դիլիջան Դեվելոփմենթ հիմնադրամ»-ի 2024 թվականի հունիսի 26-ի գրությունը՝

1.Դիլիջանի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 17-ի թիվ 292-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն, մասնավորապես՝ Դիլիջանի քաղաքաշինական և ներդրումների խրախուսման խորհրդի կազմում՝ «Դիլիջան Դեվելոփմենթ

հիմնադրամ»-ի լիազոր ներկայացուցիչ՝ «Իմպուլս Մենեջմենթ Քոմփանի» ՓԲԸ-ի տնօրեն Հրանտ Բաբասյանի փոխարեն ընդգրկել «Դիլիջան Դեվելոփմենթ հիմնադրամ»-ի տնօրեն Արթուր Ամիրխանյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 763-Ա/

Լսեցին
ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջան համայնքի ղեկավարին են դիմել Դիլիջան համայնքի բնակիչներ՝ Էդվարդ Թամամյանը, Սերժիկ Գազարյանը, Մարինա Լեոնովան և Արմեն Հախվերդյանը սեփականության իրավունքով իրենց պատկանող փոխադրամիջոցի գույքահարկի և անշարժ գույքի հարկի պարտավորությունների մասով արտոնություն սահմանելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Հարկային օրենսգրքի» 230-րդ հոդվածի 3-րդ մասի, 245-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով ՝ **Դիլիջան համայնքի ավագանին որոշում է**.

1. Քաղ. Էդվարդ Թամամյանին, Մարինա Լեոնովային սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցի գույքահարկի և Սերժիկ Գազարյանին, Արմեն Հախվերդյանին պատկանող անշարժ գույքի հարկի պարտավորությունների նկատմամբ սահմանել արտոնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 764-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՈԼԴՈՎԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/10 ՀԱՍՑԵԻ 43.1ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Ժիրայր Էդիկի Եսայանը՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց թիվ 1/4 հասցեի, իրեն

սեփականության իրավունքով պատկանող 348.0քմ հողամասին կից գտնվող /Մոլդովական փողոց թիվ 1/10 հասցեի/ 43.1քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 43.1քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց թիվ 1/10 հասցեի 43.1քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 294559 /երկու հարյուր իննսունչորս հազար հինգ հարյուր հիսունինը/ ՀՀ դրամ արժեքով օտարել քաղ. Ժիրայր Էդիկի Եսայանին:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց թիվ 1/10 հասցեի 43.1քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 294559 /երկու հարյուր իննսունչորս հազար հինգ հարյուր հիսունինը/ ՀՀ դրամ արժեքով քաղ. Ժիրայր Էդիկի Եսայանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 765-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 2327.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 3 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 2327.0քմ մակերեսով թվով 3 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գնով:
Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 2327.0քմ մակերեսով թվով 3 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 766-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲ. ԹԻՎ 6/3 ՀԱՍՑԵԻ 86.5ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Սարգիս Սամվելի Ասոյանը ՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոց 1-ին նրբ. թիվ 2 հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան սպասարկման 600.0քմ հողամասին կից գտնվող /Անդրանիկի փողոց 1-ին նրբ. թիվ 6/3 հասցեի/ 86.5քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 86.5քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոց 1-ին նրբ. թիվ 6/3 հասցեի 86.5քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 591167 /հինգ հարյուր իննսունմեկ հազար հարյուր վաթսունյոթ/ ՀՀ դրամ արժեքով օտարել քաղաքացի Սարգիս Սամվելի Ասոյանին:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոց 1-ին նրբ. թիվ 6/3 հասցեի 86.5քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 591167 /հինգ հարյուր իննսունմեկ հազար հարյուր վաթսունյոթ/ ՀՀ դրամ

արժեքով քաղաքացի Սարգիս Սամվելի Ասոյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 767-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 2284.2ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 7363.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացրել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 2284.2քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը, Գյուղատնտեսական նշանակության հողերից 7363.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտերով, մակերեսներով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գներով:
Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 2284.2քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը, Գյուղատնտեսական նշանակության հողերից 7363.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել մեկնարկային գինը՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 768-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 10450.8ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 13 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 10450.8քմ ընդհանուր մակերեսով թվով 13 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 10450.8քմ ընդհանուր մակերեսով թվով 13 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջակությանը և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 769-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՖՈՆԴՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 11-003-0056-0003 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 159.1քմ հողամասը, 11-003-0378-0005 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 50.5555քմ հողամասը, 11-003-0102-0016 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 28.9քմ հողամասը, 11-003-0325-0056 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 194.0քմ հողամասը, 11-003-0017-0059 կադաստրային ծածկագրով 102.4քմ հողամասը, 11-003-0087-0068 և 11-003-0087-0100 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 505.5քմ հողամասը, 11-003-0365-0024 և 11-003-0365-0025 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 149.6քմ հողամասը, Թեղուտ գյուղի 11-029-0009-0001 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 332.3քմ հողամասը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված են որպես ֆիզիկական անձի սեփականություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 11-003-0056-0003 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 159.1քմ հողամասը, 11-003-0378-0005 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 50.5555քմ հողամասը, 11-003-0102-0016 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 28.9քմ հողամասը, 11-003-0325-0056 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 194.0քմ հողամասը, 11-003-0017-0059 կադաստրային ծածկագրով 102.4քմ հողամասը, 11-003-0087-0068 և 11-003-0087-0100 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 505.5քմ հողամասը, 11-003-0365-0024 և 11-003-0365-0025 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 149.6քմ հողամասը, Թեղուտ գյուղի 11-029-0009-0001 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 332.3քմ հողամասը, որոնք համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված են որպես ֆիզիկական անձի սեփականություն, ընդգրկել Դիլիջան համայնքի հողերի ֆոնդում, որպես Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հողեր:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 770-Ա/

Լսեցին
ԳԵՏԻ ՀՈՒՆԻ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 27-ի «ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի մի շարք համայնքներում աղետի գոտիներ հայտարարելու, դրանց տարածքները սահմանելու և բնակչության պաշտպանության հիմնական միջոցառումներն իրականացնելու մասին» թիվ 772-Ն որոշմամբ կառավարության կողմից վերականգնվել է Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Ծատուրյան փողոցի աջ կողմի հենապատը: Հենապատի և հարակից պատերի հետագա փլուզումները կանխարգելելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել տվյալ հատվածում կատարելու Աղստև գետի հունի (մոտավորապես 500մ երկայնքով) մաքրման աշխատանքներ, մասնավորապես՝ մաքրել ծառերից, աղբից և տեղափոխել համապատասխան աղբավայր:

Ելնելով հարցի հրատապությունից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի ղեկավարի առաջակությանը վերոնշյալ աշխատանքների կատարման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 771-Ա/

Լսեցին
ԳՄՀԸ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԻՆՏԵԳՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԸՆԿԵՐ ՀԱՄԱՅՆՔ ԴԱՌՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Դիլիջան համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ)կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու հայտերի ներկայացման հրավերին:

2. Համաձայնություն տալ համայնքի ընտրության դեպքում համայնքի տվյալ տարվա բյուջեից յուրաքանչյուր ծրագրի իրականացման համար հատկացնել 22% համաֆինանսավորում՝ համաձայն հայտերի ներկայացման հրավերի Բաժին 1-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 772-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 7-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈԲԵՐՏ ՉԱՊՈՒԽՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի ավագանու 7-րդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի հոկտեմբերի 14 -ին, ժամը 17-ին:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 773-Ա/

Ավագանու անդամներ

ՌՈԲԵՐՏ ԱԼԻԽԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ

ԹԱԹՈՒԼ ԳՈՒԼԻՆՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՇԱԿ ԽԵՄՉՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՁԱՐԻՆԵ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԱՒԼՅԱՆ

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՆՈՒՆԵ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Սոնա Եգանյանը

_____